Հավելված N 1
ՀՀ կառավարության 2011 թվականի
հոկտեմբերի 6-ի N 1410 - Ն որոշման

Ֆիզիկական անձի տարեկան եկամուտների ՀԱՇՎԱՐԿ Բաժին I	Փաստաթղթի մուտքագրման համարը *(լրացվում է հարկային մարմնի կողմից)*	
	Փաստաթղթի մուտքագրման ամսաթիվը *(լրացվում է հարկային մարմնի կողմից)*	
Ա. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	Բ. Հաշվետու ժամանակաշրջանը Հարկ. տարի	Գ. Անձնական հաշվի համարը
Դ. Սոցիալական քարտի համարը		
Ե. Ֆիզիկական անձի անունը (անունը, ազգանունը, հայրանունը)	Զ. Մշտական բնակության հասցեն	
Է. ՀՀ-ում ժամանակավոր բնակության հասցեն	Ը. Տան հեռախոսահամարը	Թ. Աշխատանքային հեռախոսահամարը
Ժ. Գործունեության իրականացման վայրի հասցեն	ԺԱ. Վկայականի համարը	ԺԲ. Անձնագրի սերիան
	ԺԳ. Անձնագրի համարը	ԺԴ. Տրված

ԺԵ. Հարկային տարվա ընթացքում ՀՀ-ում անցկացրած ժամանակահատվածը														ԺԶ. Ծննդյան ամսաթիվը (օր, ամիս, տարի)
Ամիս	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	Ընդամենը	
Օրեր														ԺԷ. Հարկային մարմին ներկայացնելու ամսաթիվը

ԺԸ. Բանկային հաշիվները (ներառյալ բանկի անունը (անունները), գտնվելու վայրը)		
	Չափի միավոր	Դրամ

- Ա - նշվում է ՀՀ հարկային մարմինների կողմից տրամադրված ՀՎՀՀ-ն
- Բ - նշվում է հաշվետու ժամանակաշրջանը (հարկային տարին)
- Գ - նշվում է ֆիզիկական անձի անձնական հաշվի համարը
- Դ - նշվում է ֆիզիկական անձի սոցիալական քարտի համարը կամ սոցիալական քարտ չունենալու մասին տեղեկանքի համարը
- Ե - նշվում է ֆիզիկական անձի անունը, ազգանունը և հայրանունը
- Զ - նշվում է ֆիզիկական անձի անձնագրում գրանցված մշտական բնակության հասցեն (պարտադիր նշելով մշտական բնակության երկիրը)
- Է - նշվում է ֆիզիկական անձի ՀՀ-ում ժամանակավոր բնակության հասցեն
- Ը, Թ - նշվում են ֆիզիկական անձի տան և աշխատանքային հեռախոսահամարները
- Ժ - նշվում է ֆիզիկական անձի գործունեության իրականացման վայրը (հասցեն)
- ԺԱ - նշվում է պետական ռեգիստրի կողմից տրված վկայականի համարը

- ԺԲ, ԺԳ - նշվում է ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը
- ԺԴ - նշվում է անձնագիր տված լիազորված մարմնի անվանումը (կոդը)
- ԺԵ - նշվում է հարկային տարվա ընթացքում ֆիզիկական անձի ՀՀ-ում գտնվելու ժամանակահատվածը (օրերով)՝ ըստ ամիսների և տարվա ընթացքում (ընդամենը)
- ԺԶ - նշվում է ֆիզիկական անձի ծննդյան թիվը և ամիսը
- ԺԷ - նշվում է հարկային մարմին հայտարարագրի ներկայացման ամսաթիվը
- ԺԸ - նշվում են ֆիզիկական անձի բանկային հաշիվների համարները (պարտադիր նշելով բանկի կամ բանկի մասնաճյուղի անվանումը)

Բաժին I. Քաղաքացիաիրավական պայմանագրերից ստացված եկամուտներ, աշխատանքի վարձատրություն, դրան հավասարեցված այլ վճարումներ

Քաղաքացիաիրավական պայմանագրերից եկամուտներ [1]	
Քաղաքացիաիրավական պայմանագրերի գծով անհրաժեշտ ծախսեր՝	
- նյութական ծախսեր [2]	
- վարձակալական վճարներ [3]	
- չփոխհատուցվող (չհաշվանցվող) հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարներ [4]	
- բանկային ծառայությունների համար վճարներ [5]	
- դատական ծախսեր [6]	
- գործուղման ծախսեր [7]	
- պատճառած վնասի հատուցում [8]	
- տույժեր, տուգանքներ և գույքային այլ սանկցիաներ [9]	
- աուդիտորական, իրավաբանական, խորհրդատվական, տեղեկատվական ծախսեր[10]	
- այլ ծախսեր [11]	
Ընդամենը ծախսեր [12]	
Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ [13]	
Այլ նվազեցումներ [14]	
Քաղաքացիաիրավական պայմանագրերի, աշխատավարձի գծով արդյունք [15]	

- [1] տողում նշվում են հարկային գործակալ չհանդիսացողների հետ կնքված քաղաքացիաիրավական պայմանագրերից (բացառությամբ II և III բաժիններում նշված) եկամուտները, ընդ որում, ռեզիդենտները հաշվի են առնում ՀՀ տարածքում և դրա սահմաններից դուրս ստացվող եկամուտները, ոչ ռեզիդենտները հաշվի են առնում հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտները, իսկ նվազեցվող եկամուտները հաշվի չեն առնվում
- [2]…[11] տողերում նշվում են քաղաքացիաիրավական պայմանագրերի գծով եկամուտներից նվազեցվող ծախսերը: Ընդ որում, [4] տողում չեն նշվում գույքահարկը և հողի հարկը, [9] տողում չեն նշվում ՀՀ պետական կամ համայնքների բյուջեները, ինչպես նաև պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով գանձվող տույժերը, տուգանքները և գույքային այլ սանկցիաները
- [12] տողում նշվում է քաղաքացիաիրավական պայմանագրերի գծով կատարված ծախսերի հանրագումարը (տող[2]+…+տող[11])
- [13] տողում նշվում են հարկային գործակալ չհանդիսացողների հետ կնքված աշխատանքային պայմանագրերից աշխատանքի վարձատրությունը և դրան հավասարեցված այլ վճարումները (այդ թվում՝ նյութական օգնության գումարները), ընդ որում, ռեզիդենտները հաշվի են առնում ՀՀ տարածքում և դրա սահմաններից դուրս

ստացվող եկամուտները, ոչ ռեզիդենտները հաշվի են առնում հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտները

- [14] տողում նշվում են աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների գծով հաշվարկված կենսաթոշակային, զբաղվածության, պարտադիր սոցիալական ապահովության վճարները
- [15] տողում նշվում է քաղաքացիաիրավական պայմանագրերի, աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների գծով արդյունքը ((տող[1]-տող[12])+(տող[13]-տող[14])), որը դրական լինելու դեպքում տեղափոխվում է [51] տող (եթե արդյունքը բացասական է, ապա գումարը նշվում է փակագծերում և սույն հայտարարագրի հետագա հաշվարկում հաշվի չի առնվում)

Բաժին II. Քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից ստացված եկամուտներ

Եկամուտների տեսակը	Եկամտի գումարը [16]	Դրույքաչափը [17]	Եկամտահարկը [18]
Ռոյալթի [19]			
Տոկոս [20]			
Վարձակալության դիմաց վճար (վարձավճար) [21]			
Գույքի օտարման դիմաց եկամուտ [22]			
	Ընդամենը [23]		

- [16] սյունակում նշվում են հարկային գործակալ չհանդիսացողներից՝ ռոյալթիները, տոկոսները, վարձավճարները և անհատ ձեռնարկատեր չհանդիսացող կառուցապատողի կողմից անշարժ գույքի՝ օրենքով սահմանված չափը գերազանցող տարածքների օտարումից եկամուտը, ընդ որում, ռեզիդենտները հաշվի են առնում ՀՀ տարածքում և դրա սահմաններից դուրս ստացվող եկամուտները, ոչ ռեզիդենտները հաշվի են առնում հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտները
- [17] սյունակում նշվում են եկամտի այդ տեսակի համար հարկի սահմանված դրույքաչափերը
- [18] սյունակում նշվում են [19], [20], [21] և [22] տողերում նշված եկամտից հաշվարկված եկամտահարկի գումարները (սյունակ [16]xսյունակ[17])
- [23] տողում նշվում է ռոյալթիներից, տոկոսներից, վարձավճարներից և գույքի օտարման դիմած եկամտից հաշվարկված եկամտահարկի հանրագումարը
- (տող[19]/սյունակ[18]+տող20/սյունակ[18]+տող21/սյունակ[18]+տող22/սյունակ [18])

Բաժին III. Ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներ

Ձեռնարկատիրական գործունեությունից եկամուտներ [24]	
Ձեռնարկատիրական գործունեության գծով անհրաժեշտ ծախսեր՝	
- նյութական ծախսեր [25]	
- ամորտիզացիոն մասհանումներ [26]	
- վարձակալական վճարներ [27]	
- ապահովագրական և պարտադիր սոցիալական ապահովության վճարներ [28]	
- չփոխհատուցվող (չհաշվանցվող) հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարներ [29]	
- վարկերի և այլ փոխառությունների տոկոսներ [30]	
- բանկային ծառայությունների համար վճարներ [31]	
- գովազդային ծախսեր [32]	

- ներկայացուցչական ծախսեր [33]	
- դատական ծախսեր [34]	
- գործուղման ծախսեր [35]	
- պատճառած վնասի հատուցում [36]	
- տույժեր, տուգանքներ և գույքային այլ սանկցիաներ [37]	
- աուդիտորական, իրավաբանական, խորհրդատվական, տեղեկատվական ծախսեր [38]	
- նախորդ 3 տարում պակաս ցույց տրված ծախսեր [39]	
- այլ ծախսեր [40]	
Ընդամենը ծախսեր [41]	
Նախորդ տարվանից փոխանցվող հարկային վնասը [42]	
Ձեռնարկատիրական գործունեության գծով արդյունք [43]	

- [24] տողում նշվում են ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտները, ընդ որում, ռեզիդենտները հաշվի են առնում ՀՀ տարածքում և դրա սահմաններից դուրս ստացվող եկամուտները, ոչ ռեզիդենտները հաշվի են առնում հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտները
- [25]…[40] տողերում նշվում են ձեռնարկատիրական գործունեության գծով եկամուտներից նվազեցվող ծախսերը: Ընդ որում, [37] տողում չեն նշվում ՀՀ պետական կամ համայնքների բյուջեները, ինչպես նաև պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով գանձվող տույժերը, տուգանքները և գույքային այլ սանկցիաները, իսկ [39] տողում նշվում են հաշվետու տարում հայտնաբերված՝ դրան անմիջապես նախորդող 3 տարում պակաս ցույց տրված ծախսերը
- [41] տողում նշվում է ձեռնարկատիրական գործունեության գծով նվազեցվող ծախսերի հանրագումարը (տող[25]+..+տող[40])
- [42] տողում նշվում է նախորդ տարվանից փոխանցված հարկային վնասը
- [43] տողում նշվում է ձեռնարկատիրական գործունեության գծով արդյունքը (տող[24]-տող[41]-տող[42]), ընդ որում, եթե արդյունքը բացասական է, ապա [43] տողում գումարը նշվում է փակագծերի մեջ և կրած վնասը տեղափոխվում է հաջորդ տարի (սույն հայտարարագրի հետագա հաշվարկում հաշվի չի առնվում), իսկ եթե արդյունքը դրական է, ապա այն տեղափոխվում է տող[52]

Բաժին IV. Ռեզիդենտ ֆիզիկական անձի, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի եկամուտներ

Ամիս	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
[44]												
[45]												
[46]												
[47]												
[48]												
[49]												
Ընդամենը									[50]			

- [44] տողում լրացվում են ՀՀ-ում հարկային գործակալների հետ ռեզիդենտ ֆիզիկական անձի, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի կնքած

քաղաքացիաիրավական պայմանագրերից եկամուտների, աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների (այդ թվում՝ նյութական օգնության), ինչպես նաև նվազեցվող եկամուտների գումարները (ըստ ամիսների)

- [45] տողում նշվում են եկամտի վճարման աղբյուրի մոտ հարկված նվազեցվող եկամուտները (ըստ ամիսների)
- [46] տողում նշվում են պարտադիր սոցիալական ապահովության վճարները (ըստ ամիսների)
- [47] տողում նշվում են եկամտի ստացման յուրաքանչյուր ամսվա համար անձնական նվազեցումների ամսական մեծությունը
- [48] տողում նշվում են ըստ ամիսների հարկվող եկամտի գումարները (տող[44]-տող[45]-տող[46]-տող[47])
- [49] տողում նշվում են ամսական հարկվող եկամտից ([48] տողում նշված) հաշվարկված եկամտահարկը
- [50] տողում նշվում է [49] տողում ըստ ամիսների հաշվարկված հարկի հանրագումարը

Բաժին V. Տարեկան եկամտահարկի հաշվարկ

Քաղաքացիաիրավական պայմանագրերի, աշխատավարձի գծով արդյունք [51]	
Ձեռնարկատիրական գործունեության գծով դրական արդյունք [52]	
Կամավոր կուտակային կենսաթոշակային ապահովագրության վճարներ [53]	
Տարեկան եկամուտների ստացման ամիսներ [54]	
Անձնական նվազեցումների տարեկան մեծություն [55]	
Հարկվող եկամուտ [56]	
Բարեգործական և այլ անհատույց հատկացումներ [57]	
Տարեկան հարկվող եկամուտ [58]	
Տարեկան հարկվող եկամտից եկամտահարկ [59]	
Տարվա համար հաշվարկված եկամտահարկ [60]	
Նվազագույն եկամտահարկի տարեկան գումար [61]	
Ընդամենը տարվա համար հաշվարկված եկամտահարկի գումար [62]	
Եկամտահարկի գումարից չհաշվանցված նվազագույն եկամտահարկ [63]	
Հարկային գործակալների կողմից պահված հարկի գումարը [64]	
Այլ պետություններում պահված հարկի գումարը [65]	
Այլ պետություններում պահված հարկի գումարի հաշվանցվող մասը [66]	
Հարկային արտոնությունների գումարը [67]	
Ընդամենը նվազեցման ենթակա տարեկան եկամտահարկի գումարը [68]	
Ենթակա է վճարման կամ վերադարձման (հաշվանցման) [69]	

- [51] տողում նշվում է քաղաքացիաիրավական և աշխատանքային պայմանագրերի գծով արդյունքը (բաժին I)
- [52] տողում նշվում է ձեռնարկատիրական գործունեության գծով դրական արդյունքը (բաժին III)
- [53] տողում նշվում է տարվա ընթացքում կատարված կամավոր կուտակային կենսաթոշակային ապահովագրության վճարների համախառն եկամտի 5%-ը չգերազանցող գումարները
- [54] տողում նշվում է տարվա ամիսների թիվը, որոնց վերաբերվում են I և III բաժիններում նշված եկամուտները
- [55] տողում նշվում է անձնական նվազեցումների տարեկան մեծությունը (տող[54]xանձնական նվազեցումների ամսական մեծությունը)
- [56] տողում նշվում է հարկվող եկամտի գումարը {(տող [51]+տող [52])-տող[53] -տող[55]}

- [57] տողում նշվում է տարվա ընթացքում կատարված բարեգործական և այլ անհատույց հատկացումների նվազեցվող գումարը (տող [56]-տող[56]/1,05)
- [58] տողում նշվում է ձեռնարկատիրական գործունեությունից, քաղաքացիաիրավական և աշխատանքային պայմանագրերից տարեկան հարկվող եկամուտի գումարը (տող[56]-տող[57])
- [59] տողում նշվում է [58] տողում նշված տարեկան հարկվող եկամտից (տարեկան դրույքաչափերով) հաշվարկված եկամտահարկի գումարը
- [60] տողում նշվում է տարվա համար հաշվարկված եկամտահարկի հանրագումարը (տող[23]+տող[50]+տող[59])
- [61] տողում նշվում է հաշվետու տարում հաշվարկված նվազագույն եկամտահարկի գումարը
- [62] տողում նշվում է ընդամենը տարվա համար հաշվարկված եկամտահարկը (տող[60] և տող[61] առավելագույնը)
- [63] տողում նշվում է նախորդ և հաշվետու տարիներում վճարված՝ եկամտահարկի գումարից չհաշվանցված նվազագույն եկամտահարկի գումարը (հաջորդ տարիներ փոխանցվող եկամտահարկի նվազագույն գումարը)
- [64] տողում նշվում է (հարկային գործակալների կողմից տրված տեղեկանքների հիման վրա) եկամտի վճարման աղբյուրի մոտ պահված (գանձված) եկամտահարկի գումարը
- [65] և [66] տողերում նշվում են այլ պետություններում՝ դրանց օրենսդրությանը համապատասխան պահված (գանձված) եկամտահարկը (օտարերկրյա պետության համապատասխան հարկային մարմնի կողմից վավերացված տեղեկանքի հիման վրա) և եկամտահարկի այն գումարը, որի չափով ՀՀ օրենսդրությանը համապատասխան ենթակա է նվազեցման տարեկան եկամտահարկը
- [67] տողում նշվում է օրենքով սահմանված հարկային արտոնությունների ընդհանուր գումարը
- [68] տողում նշվում է տարեկան եկամտահարկից նվազեցման ենթակա գումարը (տող[63]+տող[64]+տող[66]+տող[67])
- [69] տողում նշվում է ՀՀ պետական բյուջե վճարման կամ ՀՀ պետական բյուջեից վերադարձման (հաշվանցման) ենթակա եկամտահարկի գումարը (տող[62]-տող[68]՝ բացասական արդյունքերը նշվում է փակագծերի մեջ)

Հաշվետու տարվա հաշվարկված նվազագույն եկամտահարկի գումարներ (ըստ եռամսյակների)

Եռամսյակ	I	II	III	IV	Ընդամենը
Գումար					

Հաշվարկը ներկայացնողի ստորագրությունը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2011 թվականի
հոկտեմբերի 6-ի N 1410 - Ն որոշման

Ֆիզիկական անձի տարեկան եկամուտների ՊԱՐԶԵՑՎԱԾ ՀԱՇՎԱՐԿ Բաժին I	Փաստաթղթի մուտքագրման համարը *(լրացվում է հարկային մարմնի կողմից)*	
	Փաստաթղթի մուտքագրման ամսաթիվը *(լրացվում է հարկային մարմնի կողմից)*	
Ա. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	Բ. Հաշվետու ժամանակաշրջանը Հարկ. տարի	Գ. Անձնական հաշվի համարը
Դ. Սոցիալական քարտի համարը		
Ե. Ֆիզիկական անձի անունը (անունը, ազգանունը, հայրանունը)	Զ. Մշտական բնակության հասցեն	
Է. ՀՀ-ում ժամանակավոր բնակության հասցեն	Ը. Տան հեռախոսա համարը	Թ. Աշխատանքային հեռախոսահամարը
Ժ. Գործունեության իրականացման վայրի հասցեն	ԺԱ. Վկայականի համարը	ԺԲ. Անձնագրի սերիան
	ԺԳ. Անձնագրի համարը	ԺԴ. Տրված

ԺԵ. Հարկային տարվա ընթացքում ՀՀ-ում անցկացրած ժամանակահատվածը														ԺԶ. Ծննդյան ամսաթիվը (օր, ամիս, տարի)
Ամիս	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	Ընդամենը	
Օրեր														ԺԷ. Հարկային մարմին ներկայացնելու ամսաթիվը

ԺԸ. Բանկային հաշիվները (ներառյալ բանկի անունը (անունները), գտնվելու վայրը)		
	Չափի միավոր	Դրամ

- Ա - նշվում է ՀՀ հարկային մարմինների կողմից տրամադրված ՀՎՀՀ-ն
- Բ - նշվում է հաշվետու ժամանակաշրջանը (հարկային տարին)
- Գ - նշվում է ֆիզիկական անձի անձնական հաշվի համարը
- Դ - նշվում է ֆիզիկական անձի սոցիալական քարտի համարը կամ սոցիալական քարտ չունենալու մասին տեղեկանքի համարը
- Ե - նշվում է ֆիզիկական անձի անունը, ազգանունը և հայրանունը
- Զ - նշվում է ֆիզիկական անձի անձնագրում գրանցված մշտական բնակության հասցեն (պարտադիր նշելով մշտական բնակության երկիրը)
- Է - նշվում է ֆիզիկական անձի ՀՀ-ում ժամանակավոր բնակության հասցեն
- Ը, Թ - նշվում են ֆիզիկական անձի տան և աշխատանքային հեռախոսահամարները
- Ժ - նշվում է ֆիզիկական անձի գործունեության իրականացման վայրը (հասցեն)
- ԺԱ - նշվում է պետական ռեգիստրի կողմից տրված վկայականի համարը
- ԺԲ, ԺԳ - նշվում է ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը

- ԺԴ - նշվում է անձնագիր տված լիազորված մարմնի անվանումը (կոդը)
- ԺԵ - նշվում է հարկային տարվա ընթացքում ֆիզիկական անձի ՀՀ-ում գտնվելու ժամանակահատվածը (օրերով)՝ ըստ ամիսների և տարվա ընթացքում (ընդամենը)
- ԺԶ - նշվում է ֆիզիկական անձի ծննդյան թիվը և ամիսը
- ԺԷ - նշվում է հարկային մարմին հայտարարագրի ներկայացման ամսաթիվը
- ԺԸ - նշվում են ֆիզիկական անձի բանկային հաշիվների համարները (պարտադիր նշելով բանկի կամ բանկի մասնաճյուղի անվանումը)

Բաժին I. Քաղաքացիաիրավական պայմանագրերից ստացված եկամուտներ, աշխատանքի վարձատրություն, դրան հավասարեցված այլ վճարումներ

Քաղաքացիաիրավական պայմանագրերից եկամուտները [1]	
Քաղաքացիաիրավական պայմանագրերի գծով անհրաժեշտ ծախսերը [2]	
Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ [3]	
Այլ նվազեցումներ [4]	
Քաղաքացիաիրավական պայմանագրերի, աշխատավարձի գծով արդյունքը [5]	

Քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից ստացված եկամուտների տեսակը	Եկամտի գումարը [6]	Դրույքաչափը [7]	Եկամտահարկը [8]
Ռոյալթի [9]			
Տոկոս [10]			
Վարձակալության դիմաց վճար (վարձավճար) [11]			
Գույքի օտարման դիմաց եկամուտ [12]			
	Ընդամենը [13]		

- [1] տողում նշվում են հարկային գործակալ չհանդիսացողների հետ կնքված քաղաքացիաիրավական պայմանագրերից (բացառությամբ II բաժնում նշվածի) եկամուտները (բացառությամբ ռոյալթիների, տոկոսների, վարձավճարների,գույքի օտարման դիմաց եկամուտների և նվազեցվող եկամուտների)
- [2] տողում նշվում են [1] տողում նշված քաղաքացիաիրավական պայմանագրերի գծով նվազեցվող ծախսերը
- [3] տողում նշվում են հարկային գործակալ չհանդիսացողների հետ կնքված աշխատանքային պայմանագրերից աշխատանքի վարձատրությունը և դրան հավասարեցված այլ վճարումները (այդ թվում՝ նյութական օգնության գումարները)
- [4] տողում նշվում են [3] տողում նշված աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների գծով հաշվարկված կենսաթոշակային, զբաղվածության, պարտադիր սոցիալական ապահովության վճարները
- [5] տողում նշվում է [1] տողում նշված քաղաքացիաիրավական պայմանագրերի, [3] տողում նշված աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների գծով արդյունքը (տող[1]-տող[2])+(տող[3]-տող[4]), որը դրական լինելու դեպքում տեղափոխվում է [25] տող (եթե արդյունքը բացասական է, ապա գումարը նշվում է փակագծերում և սույն հայտարարագրի հետագա հաշվարկում հաշվի չի առնվում)
- [6] սյունակում նշվում են հարկային գործակալ չհանդիսացողներից՝ ռոյալթիները, տոկոսները, վարձավճարները և անհատ ձեռնարկատեր չհանդիսացող կառուցապատողի կողմից անշարժ գույքի՝ օրենքով սահմանված չափը գերազանցող տարածքների օտարումից եկամուտը

- [7] սյունակում նշվում են եկամտի այդ տեսակի համար հարկի սահմանված դրույքաչափերը
- [8] սյունակում նշվում են [9], [10], [11] և [12] տողերում նշված եկամտից հաշվարկված եկամտահարկի գումարները (սյունակ [6]xսյունակ[7])
- [13] տողում նշվում է ռոյալթիներից, տոկոսներից, վարձավճարներից և գույքի օտարման դիմած եկամտից հաշվարկված եկամտահարկի հանրագումարը (տող[9]/սյունակ[8]+տող10/սյունակ[8]+տող11/սյունակ[8] +տող12/սյունակ [8])

Բաժին II. Ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտները

Ձեռնարկատիրական գործունեությունից եկամուտները	[14]	
Ձեռնարկատիրական գործունեության գծով անհրաժեշտ ծախսերը	[15]	
Նախորդ տարվանից փոխանցվող հարկային վնասը	[16]	
Ձեռնարկատիրական գործունեության գծով արդյունքը	[17]	

- [14] տողում նշվում են ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտները
- [15] տողում նշվում է ձեռնարկատիրական գործունեության գծով նվազեցվող ծախսերը
- [16] տողում նշվում է նախորդ տարվանից փոխանցված հարկային վնասը
- [17] տողում նշվում է ձեռնարկատիրական գործունեության գծով արդյունքը (տող[14]-տող[15]-տող[16]), ընդ որում, եթե արդյունքը բացասական է, ապա [17] տողում գումարը նշվում է փակագծերի մեջ և կրած վնասը տեղափոխվում է հաջորդ տարի (հետագա հաշվարկում հաշվի չի առնվում), իսկ եթե դրական է, ապա այն տեղափոխվում է տող[26]

Բաժին III. Ռեզիդենտ ֆիզիկական անձի, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի եկամուտները

Ամիս	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
[18]												
[19]												
[20]												
[21]												
[22]												
[23]												
Ընդամենը									[24]			

- [18] տողում լրացվում են ՀՀ-ում հարկային գործակալներից ռեզիդենտ ֆիզիկական անձի, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի քաղաքացիաիրավական պայմանագրերից ստացած եկամուտները, աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հաշվարկային գումարները, ինչպես նաև նվազեցվող եկամուտները (ըստ ամիսների)
- [19] տողում նշվում են եկամտի վճարման աղբյուրի մոտ հարկված նվազեցվող եկամուտները (ըստ ամիսների)
- [20] տողում նշվում են պարտադիր սոցիալական ապահովության վճարները (ըստ ամիսների)
- [21] տողում նշվում է եկամտի ստացման յուրաքանչյուր ամսվա համար անձնական նվազեցման ամսական մեծությունը

- [22] տողում նշվում են ըստ ամիսների հարկվող եկամտի գումարները (տող[18]-տող[19]-տող[20]- տող[21])
- [23] տողում նշվում են ամսական հարկվող եկամտից ([22] տողում նշված) հաշվարկված եկամտահարկը
- [24] տողում նշվում է [23] տողում ըստ ամիսների հաշվարկված հարկի հանրագումարը

Բաժին IV. Տարեկան եկամտահարկի հաշվարկը

Քաղաքացիաիրավական պայմանագրերի, աշխատավարձի գծով արդյունքը [25]	
Ձեռնարկատիրական գործունեության գծով դրական արդյունքը [26]	
Կամավոր կուտակային կենսաթոշակային ապահովագրության վճարներ [27]	
Տարեկան եկամուտների ստացման ամիսները [28]	
Անձնական նվազեցումների տարեկան մեծությունը [29]	
Հարկվող եկամուտը [30]	
Բարեգործական և այլ անհատույց հատկացումներ [31]	
Տարեկան հարկվող եկամուտը [32]	
Տարեկան հարկվող եկամտից եկամտահարկը [33]	
Տարվա համար հաշվարկված եկամտահարկը [34]	
Նվազագույն եկամտահարկի տարեկան գումարը [35]	
Ընդամենը տարվա համար հաշվարկված եկամտահարկի գումարը [36]	
Եկամտահարկի գումարից չհաշվանցված նվազագույն եկամտահարկը [37]	
Հարկային գործակալների կողմից պահված հարկի գումարը [38]	
Այլ պետություններում պահված հարկի գումարը [39]	
Այլ պետություններում պահված հարկի գումարի հաշվանցվող մասը [40]	
Հարկային արտոնությունների գումարը [41]	
Ընդամենը նվազեցման ենթակա տարեկան եկամտահարկի գումարը [42]	
Ենթակա է վճարման կամ վերադարձման (հաշվանցման) [43]	

- [25] տողում նշվում է քաղաքացիաիրավական և աշխատանքային պայմանագրերի գծով արդյունքը (տող[5])
- [26] տողում նշվում է ձեռնարկատիրական գործունեության գծով դրական արդյունքը (տող[17])
- [27] տողում նշվում են տարվա ընթացքում կատարված կամավոր կուտակային կենսաթոշակային ապահովագրության վճարների համախառն եկամտի 5%-ը չգերազանցող գումարները
- [28] տողում նշվում է տարվա ամիսների թիվը, որոնց վերաբերվում են [1], [3] և [14] տողերում նշված եկամուտները
- [29] տողում նշվում է անձնական նվազեցումների տարեկան մեծությունը (տող[28]x/անձնական նվազեցման ամսական մեծությունը/)
- [30] տողում նշվում է հարկվող եկամտի գումարը {(տող [24]+տող [25])-տող[27]-տող[29]}
- [31] տողում նշվում է տարվա ընթացքում կատարված բարեգործական և այլ անհատույց հատկացումների նվազեցվող գումարը (տող [30]-տող[30]/1,05)
- [32] տողում նշվում է ձեռնարկատիրական գործունեությունից, քաղաքացիաիրավական և աշխատանքային պայմանագրերից տարեկան հարկվող եկամտի գումարը (տող[30]-տող[31])
- [33] տողում նշվում է [32] տողում նշված տարեկան հարկվող եկամտից (տարեկան դրույքաչափերով) հաշվարկված եկամտահարկի գումարը
- [34] տողում նշվում է տարվա համար հաշվարկված եկամտահարկի հանրագումարը (տող[13]+տող[24]+տող[33])

- [35] տողում նշվում է հաշվետու տարում հաշվարկված նվազագույն եկամտահարկի գումարը
- [36] տողում նշվում է ընդամենը տարվա համար հաշվարկված եկամտահարկը (տող[34] և տող[35] առավելագույնը)
- [37] տողում նշվում է նախորդ և հաշվետու տարիներում վճարված՝ եկամտահարկի գումարից չհաշվանցված նվազագույն եկամտահարկի գումարը (հաջորդ տարիներ փոխանցվող եկամտահարկի նվազագույն գումարը)
- [38] տողում նշվում է (հարկային գործակալների կողմից տրված տեղեկանքների հիման վրա) եկամտի վճարման աղբյուրի մոտ պահված (գանձված) եկամտահարկի գումարը
- [39] և [40] տողերում նշվում են այլ պետություններում՝ դրանց օրենսդրությանը համապատասխան պահված (գանձված) եկամտահարկը (օտարերկրյա պետության համապատասխան հարկային մարմնի կողմից վավերացված տեղեկանքի հիման վրա) և եկամտահարկի այն գումարը, որի չափով Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ենթակա է նվազեցման տարեկան եկամտահարկը
- [41] տողում նշվում է օրենքով սահմանված հարկային արտոնությունների ընդհանուր գումարը
- [42] տողում նշվում է տարեկան եկամտահարկից նվազեցման ենթակա գումարը (տող[37]+տող[38]+տող[40]+տող[41])
- [43] տողում նշվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման կամ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից վերադարձման (հաշվանցման) ենթակա եկամտահարկի գումարը (տող[36]-տող[42]՝ բացասական արդյունը նշվում է փակագծերի մեջ)
- սույն հաշվարկում ռեզիդենտները ներառում են Հայաստանի Հանրապետության տարածքում և դրա սահմաններից դուրս ստացվող եկամուտները, իսկ ոչ ռեզիդենտները՝ հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտները

Հաշվետու տարվա հաշվարկված նվազագույն եկամտահարկի գումարները
(ըստ եռամսյակների)

Եռամսյակ	I	II	III	IV	Ընդամենը
Գումար					

Հաշվարկը ներկայացնողի ստորագրությունը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ